

Կարօն Դէպի Հայաստան...

24 Հոկտեմբեր 2005
Երուսաղէմ

Աւելի քան յիսուն Հ.Մ.Ը.Մ.ական եղբայր քոյրեր միասին հաւաքուած ակումբիս կեդրոնական փոքր սրահի մէջ վերցուցին բարեմադրութեանց բաժակները վարչական եղբայր Կարօ Պաղպուտերեանի դէպ Հայաստան երթի-վերադարձին ուրախ առթիւ:

Կարօն, միութեանս երիտասարդ վարչական եղբայր եւ գերազանցօրէն գործոն անդամ, վերջին քանի մը տարիներու ընթացքին, քանի մը անգամ Հայաստան կատարած այտոյտներէ ետք կու գար այսօր մեզ աւետելու իր Հայաստան վերադարձը այս անգամ հոն մնալու լուրջ տրամադրութեամբ:

Կարօն կ'երթայ միանալու իր միութենական եղբայրներ Միհրան Տէր Մաթոսեանի, Միհրան Գրիգորեանի, Վազգէն Տէմիրճեանի թէ քոյր Թամար Կիրակոսեանի, որոնք ուսման թէ գործի ծրագրումներու բերումով արդէն Հայաստան կը մնան տարիներէ ի վեր ու հրաւեր կը կարդան մեզ այլեւ շարժուելու դէպի հոն:

Վաշութեանս թէ մասնաճիւղիս անդամներու սրտաբուխ բարեմադրութիւնները Կարօին թէ Կարօի նման բոլոր գործնապէս Հայաստան վերադարնալու տրամադրուածներուն:

